ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ БОГОСЛОВИЯ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF THEOLOGY

ՏԱՐԵԳԻՐՔ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԺԱ

ЕЖЕГОДНИК

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ

ТОМ XI

YEARBOOK

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

VOLUME XI

ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ
ЕРЕВАН - 2016

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ - 2016

YSU PRESS
YEREVAN - 2016

ՔՐԴԵՐԻ, ԵԶԴԻՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՍԻԿՆԵՐԻ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՐԱՖՖՈՒ «ԿԱՅԾԵՐ» ՎԵՊՈՒՄ

Անուշավան Պետրոսյան

Ռաֆֆու գրական ժառանգությունը, հատկապես «Կայծերը», համարվում է ազգագրության կարևոր սկզբնաղբյուր[1]: Սույն հոդվածի շարադրարադրման հիմքում ընկած է քրդերի, եզդիների ու պարսիկների վերաբերյալ Ռաֆֆու համառոտ գրառումները, որոնք վերաբերում են նրանց սովորույթներին, հավատալիքներին, զբաղմունքներին ու կենցաղի տարբեր ոլորտներին: Չնայած վերջին շրջանում հիշյալ ժողովուրդների ազգագրության վերաբերյալ մեզանում առկա ազգագրական ուսումնասիրություններին՝ Ռաֆֆու գրառումները դուրս են մնացել հետազոտողների ուշադրությունից: Մինչդեռ, դրանք արժանահավատ են՝ գրառված ականատեսի կողմից և արժանի են ուշադրության:

Քրդեր: Քրդերի վերաբերյալ նկարագրությունները Ռաֆֆու շրջագայությունների արդյունք են և ուրվագծում են քրդերի կենցաղամշակութային ինքնատիպությունը[2]: Ըստ Ռաֆֆու՝ թուրը, զույգ ատրճանակը, վահանը և նիզակը քրդի մարմնի մասերն են, նրանից անբաժան, իսկ հրացանը նա օգտագործում է միայն կռիվների մեջ: Թամբած ձին, որ միշտ պատրաստ է նրա վրանի առջև, քրդի հավատարիմ ընկերն է, որին տերը առավել է սիրում, քան կնոջն ու որդիներին: Քուրդը վրանի առջև հյուրասեր է, սակայն չի վարանի կողոպտել նույն հյուրին վրանից մի մղոն հեռավորության վրա[3]:

19-րդ դարում քրդերի մեջ դեռևս լավ պահպանվել էր արյան վրեժը, ըստ որի սպանվածը հանգիստ չի մնա իր գերեզմանում, քանի դեռ արյան վրեժը չի առնվել: Այս ընկալումն անցնելով սերնդից-սերունդ դեռևս բավական կենսունակ էր: Ռաֆֆին վկայում է, որ սպանողն ազատվում էր արյան վրեժից, եթե գնում էր սպանվողի տուն, իր սուրը գցում տան

---

[1] Տե՛ս **Ա.Պետրոսյան**, Ազգագրական նյութերը Ռաֆֆու «Կայծեր» վեպում, ԵՊՀ պատմության ֆակուլտետի «Պատմություն և մշակույթ» (հայագիտական հանդես), հ. 3, Երևան, 2014:

[2] **Ռաֆֆի**, Ի՞նչ է քուրդը և ի՞նչ է թուրքը, «Կայծեր», ԵԺ, հ. 4, Երևան, 1963:

[3] Նույն տեղում, էջ 362:

գլխավորի ոտքերի տակ և ներողություն խնդրում: Սակայն «հազիվ գտնվեր մի քուրդ, որ խոնարհվեր այդ աստիճան ստորությանը[1]»: Քուրդը ոխերիմ է և քինախնդիր, մինչև մահ չի մոռանում վիրավորանքը, քանի դեռ լիովին չի հատուցել: Քուրդը միաժամանակ հպարտ է և ազնիվ. նա դադարեցնում է կռիվը, եթե միջամտում են կանայք: Ըստ Ռաֆֆու՝ մեռած կամ սպանված տղամարդուց հետո քրդուհու կրկին ամուսնանալը արգելվում էր: Նա միշտ մնում էր այրի, մխիթարվում, թե իր ամուսինը «լավ ավազակ էր» և զավակներին պատմում էր նրա կատարածի մասին[2]: Մանկությունից քուրդը սկսում է սովորել նժույգ գողանալ, իսկ երբ հասունանում է ամուսնության համար, կարևորվում է երիտասարդի կողմից աղջիկ փախցնելը: Քրդի ամենից մեծ երդումը Թալախի վրա է լինում[3]: Որպես բնության ազատ զավակ, քուրդը բավականանում է իր անասուններով, «հովիվ է, չունի տուն և մշտական բնակության վայր, նրա օթեվանը իր չադրն է»: Միայն ցուրտն ու ձյունն է քրդին քշում սարերից՝ իրենց անասուններով, մնում է որևէ հայի տանը մինչև գարուն:

Քրդի ուտեստն, ըստ Ռաֆֆու, մածունը, կարագը, կաթը, պանիրը, սերը, յուղն է: Հագուստը ամբողջովին պատրաստում է քրդուհին՝ անասունների կաշվից ու բրդից: Երկրագործությունը, արհեստը քրդի համար ստոր զբաղմունք են՝ ռայայի (հպատակ) գործ: Վաճառականությունը պահել է իր նախնական տեսքը. տալիս է քսան ոչխար և գնում մի ձի, անասնապահական մթերքները փոխանակում այլուրի և գործիքների հետ:

---

[1] Նույն տեղում: Հայ իրականության մեջ եթե սպանողը մտներ սպանվողի գերդաստան և նստեր թոնրի շուրթին, նրան ձեռք տալն արգելվում էր: Նման դեպքում նահապետը հարսներին կարգադրում էր **պատանք կարել**: Հարսներն արագ պատրաստում էին պատանքը և հագցնում սպանողին: Այնուհետև պարանը գցում էին նրա պարանոցին, տանում եկեղեցի և սպանողի գերեզմանին, անում որոշ արարողություններ, որից հետո հանցանքը համարվում էր ներված (տե՛ս **Ա. Պետրոսյան**, Հայ գրականությունը և բանարվեստը ազգագրության սկզբնաղբյուր, Երևան, 2012, էջ 264-265):

[2] **Ռաֆֆի**, Ի՞նչ է քուրդը, ի՞նչ է թուրքը, էջ 362:

[3] **Թալախ** նշանակում է բախտ կամ ամուսնական կապ, երբ քուրդը դրանով երդվելուց հետո ուխտազանց է լինում. «Թող իմ կինը ինձ հարամ (արգելված) լինի, ասում է քուրդը, եթե չկատարեմ խոստումս»: Ամուսնական կապը նույնքան հարգելի է քրդի համար, որքան մի քաջի համար, որն ունի ասպետական զգացմունքներ (տե՛ս Ռաֆֆի, Ջալալեդդին, ԵԺ, հ.3., Երևան, 1962, էջ 12):

Նման գործարքներում միշտ խաբվում է: Քուրդը խաբեբա չէ, նա ճշտապահ է իր խոստման մեջ[1]:

Ռաֆֆին հետաքրքիր վկայություններ ունի քրդերի քաղաքական կյանքի, զանազան պաշտոնների վերաբերյալ, որ բացահայտում են ուշագրավ մանրամասներ: Քրդերը կառավարվում են **ցեղապետերի** և **շեյխերի** կողմից, ցեղապետը հայտնի է **միր** (տեր) անունով, ընտրվում է որպես ցեղի նահապետ, պաշտոնը փոխանցվում է ժառանգաբար: Ցեղը խոնարհաբար ենթարկվում է նրա կամքին: Նա է լուծում վեճերը, բաժանում ավարը, կռվի ժամանակ առաջնորդում իր ցեղակիցներին: Ցեղապետն իր վրանում ամեն առավոտ ընդունում է ցեղի տղամարդկանց, տալիս հանձնարարություններ: Այստեղ են ծխում հյուրասիրության չիբուխը: «Մի այսպիսի «սալամը» կարևորվում է ամեն առավոտ իր բոլոր ճշտությամբ: Տարոնի և Վասպուրականի ամբողջ գավառները բաժանված են քրդերի զանազան ցեղերի միջև»[2]:

Շեյխը, ըստ Ռաֆֆու, նշանակվի է, նա է կատարում ցեղի ամուսնության, թլպատման արարողությունները, հրապարակային նամազը, կռիվներին մասնակցում որպես զինվոր, ավարառության ժամանակ ավազակապետ է[3]: Սակայն այսքանով չեն ավարտվում շեյխի գործունեության շրջանակները: Նշանավոր շեյխը մեծ ազդեցություն ունի քրդերի վրա, նրան համարյա պաշտում են, մարգարեին հավասար հարգում, **երդվում շեյխի գլուխը վկա** խոսքերով, որն ամենամեծ երդումն է նրանց մեջ: Այն օրը, որ շեյխը բաղնիք է մտնում, տղամարդիկ նրա լողանալու ջուրը հավաքելով՝ բաժանում են իրար մեջ, սրսկում մորուքներին որպես օրհնած ջուր: Չբեր կանայք նրա ոտքերի հետքերից փոշին հավաքում, ինչ-որ կախարդական արարողություններ են կատարում, զավակ ունենալու ակնկալիքով: Նա հատկապես ատում է քրիստոնյաներին, երբ տանից դուրս է գալիս, դեմքը ծածկում է, որ գյավուրները իր սրբազան երեսը չտեսնեն[4]:

Երտասարդը մինչև մի քանի մարդ սպանած չլիներ-, գրում է Ռաֆֆին,- մարմնի վրա վերքեր չունենար, նրան աղջիկ չէին տալիս: Աղջիկ-

---

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում, էջ 364:

[3] Նույն տեղում, էջ 364-365:

[4] **Ռաֆֆի**, Գուշակողը, «Կայծեր» ԵԺ, հ. 5, Երևան, 1963, էջ 285:

ները անպատվություն էին համարում երկչոտին ամուսին ընտրել, իսկ այժմ երիտասարդի քսակն են շոշափում: Քուրդ երիտասարդները իրենց մարմնի վրա եղած սպիները զարդ են համարում և դրանով պարծենում[1]:

Հպատակները վճարում են տարբեր տեսակի հարկեր. հողի, անասունների, արհեստների, բնակության տեղի, գլխահարկ: Չկա որևէ չափ ու սահման. հարկերի չափը կախված է հարկահավաքների խղճից, նրանք ցեղի ազնվական մարդիկ են՝ **խաֆիր** կամ **դերաբեյիններ** անունով: Աղաների (խաֆիր) սեփականությունը տոհմային կամ կալվածական ժառանգություն չէր, այն սեփականացված էր սրի ուժով և անցնում էր մեկից մյուսին, որի հետևանքով երբեմն բախումներից ավերակ էին դառնում ամբողջ գյուղեր ու քաղաքներ: Նման պարագայում քուրդը կորցնելու ոչինչ չուներ, ամբողջ ծանրությունը ընկնում էր հայերի կամ մյուս քրիստոնյաների վրա[2]: Ժողովուրդը գտնվում էր անվերջ երկյուղի և հուսահատության մեջ: Այսպիսին էր վիճակը Տարոնում և Վասպուրականում, բռնակալ քուրդը երկրի տերը չէր: Նա զանազան թափառական ցեղերից բաղկացած մի ամբոխ էր,- նկատում է Ռաֆֆին[3]:

Հատկապես ծանր դրության մեջ էր Էրզրումի, Բայազետի, Հաղբակի, Վանի, Բաղեշի, Մուշի, Շատախի, Սասունի, Խիզանի, Չարսանջակի և այլ գավառների հայ բնակչությունը: «Նրանց տիրում է մի ավազակ ցեղ, որի աջ ձեռքը իր սուրն էր, որի ոտքերը -իր նժույգն էր, որի տունը-իր թեթև չադրը, որի հայրենիքը - ամեն տեղ, որի հայացքը-թշվառ մարդկությունը, որի օրենքը և իրավունքը -իր կամքը, որի կյանքի նպատակը-փշրել, խորտակել և ոչնչացնել, որի գործող ոգին - իր երկաթե սիրտը, վայրենի կատաղությունը և գազանական հանդգնությունը…[4]»:

Ռաֆֆին անդրադարձել է նաև քրդերի մեջ տարածված հավատալիքներին: Քրդերը համոզված էին, որ տարբեր միջոցներով՝ թալիսմաններով, հնարավոր է կնոջից հեռացած քուրդ տղամարդուն կրկին վերադարձնել: Քրդուհի Գյուլին հայերից գողացված ոչխարը պարկի մեջ դրած տանում էր **Աստծու մարդուն,** որպեսզի նրա թալիսմաններով իր

---

[1] Նույն տեղում, էջ 309-310:

[2] Նույն տեղում, էջ 364-365:

[3] Նույն տեղում, էջ 367:

[4] Նույն տեղում, էջ 368:

սիրած տղային հետ բերի: Միաժամանակ, «Այդ աղջիկը գնում էր կախարդի մոտ, որ նրա թալիսմաններով գրավի իր սիրեկանին»[1]:

Նկարագրելով սուրբ Տիրամորը նվիրված տոնախմբությունը՝ Ռաֆֆին ցավով արձանագրում է. «այնտեղ, ուր բեմի վրա շարված էին վանքի սրբությունները՝ համբուրելու համար, վարդապետների թվում կանգնած էր մի քուրդ և հսկում էր նվերների վրա, որ համբուրող ուխտավորները ընծայում էին: Մի այլ քուրդ ևս նույն պաշտոնով կանգնած էր Տիրամոր գերեզմանի մոտ»: Նրանք հաշվում էին ուխտավորների նվիրած արծաթը, որ վարդապետները «անհավատարիմ կերպով չվարվեն նրա հետ», և Հեյդար աղան կարողանա ստանալ տոնի եկամուտի իր մասը[2]:

Ռաֆֆին չէր կարող շրջանցել քրդերի ժողովրդական բանահյուսությունը, որ «վերցրած էր կենդանի անցքերից»: «Հովվերգությունը քաջազնական հանգերգությունը գլխավոր տեղ էին բռնում նրանց բանաստեղծության մեջ»- գրում է նա,- առաջինը որպես մի խաշնարած ցեղի կյանքի առնչություն, երկրորդը որպես նրա պատերազմական ոգու արտահայտություն»: Նրանց հովվական երգերը տխուր են ու մելամաղձոտ, իսկ պատերազմական երգերը՝ կրակոտ ու խրոխտ: Երգերի թեման քրդի իրական կյանքն է, քաջության գովաբանումը և թուլության պարսավումը[3]:

Այսպիսով, Ռաֆֆու ճամփորդություններն ու շփումները քրդերի հետ, արված գրառումները հնարավորություն են տալիս խորությամբ հասկանալու նրանց ավանդական կենցաղը, սերնդից սերունդ փոխանցված բարքերն ու սովորույթները: Այդ վկայությունները վստահելի աղբյուր են քրդերի ավանդական կենցաղամշակութային նկարագրի բացահայտման համար:

Եզդիներ: Վեպում Ռաֆֆին տվել է եզդիների ազգագրական համառոտ նկարագիրը[4]: Կանաչազարդ հովտի մեջ,- գրում է Ռաֆֆին,- տեղադրված էին եզդիների մի քանի հարյուր վրաններ, կենտրոնում՝ բեկի վրանը: Այն զանազանվում էր մյուսներից իր մեծությամբ ու գեղեցկությամբ և բաժանված էր չորս մասի. մեկի մեջ, որտեղ ընդունեցին մեզ,

---

[1] **Ռաֆֆի**, Քրդուհին և հայուհին, «Կայծեր», հ. 4, էջ 409-410:

[2] **Ռաֆֆի**, Քուրդը քրիստոնեական սրբարանի մեջ, նույն տեղում, էջ 441:

[3] **Ռաֆֆի**, Ի՞նչ է քուրդը և ի՞նչ է թուրքը, էջ 361:

[4] **Ռաֆֆի**, Եզդիներ, Կայծեր, հ. 4:

նստած էր բեկը և անհանգիստ դիտում էր չորս կողմը, զգուշանալով թշնամու հանկարծակի հարձակումներից: Այդ մասը նրա **հյուրանոցն էր**, հատակին՝ երկար նիզակներ, պատրաստված Տիգրիսի ափերում աճող եղեգից: Հյուրանոցի սյուներից կախված էին վահաններ, սրեր, հրացաններ: Հյուրանոցի աջ կողմում պատրաստ էին մի քանի թամբած ձիեր, որ վտանգի դեպքում իսկույն դուրս գան թշնամու դեմ, ձախակողմյան մասում կանգնած էին բեկի ազգական թիկնապահները, ետևի մասի ընդարձակ բաժինը բեկի կանանոցն էր: Այս ամենը անջատված էին վարագույրներով, և վրանը «շարժական ապարանք» էր, իր պարզությամբ ու նահապետական անշուքությամբ[1]:

Եզդի բեկի կացարանի եզակի նկարագիր է այս պատառիկը ոչ միայն գեղարվեստական, այլև մասնագիտական գրականության մեջ: Ուշագրավ են բեկի և Ֆարհատի հանդիպման ժամանակ բեկի հարցադրումները, որը հուշում է եզդիների հոգեբանության, հիմնական զբաղմունքների մասին: «Դու քանի՞ ձի ես գողացել, հարցնում էր նա, քանի՞ մարդ ես սպանել: Պատահե՞լ է քեզ աղջիկ փախցնել»: Նա այնպես հանգիստ էր այդ հարցերը տալիս, ինչպես վարժատան աշակերտներին կհարցնեին - «Դու կարդացե՞լ ես Նարեկը, կամ շարականից որքա՞ն ես անցել»: Բեկը լսելով իր հարցերի բացասական պատասխանը, ծիծաղելով ասում է «որքան ծույլ ես դու»[2]: Նա գտնում է, որ պահը հարմար է հյուրին փորձելու, նրա գողացած ձիու դիմաց հարևան ցեղից մի քանի ձիեր բերելու իր վրանը: Կրկին մերժում ստանալով՝ բեկն ասում է. «...դու ոչ միայն երկչոտ ես, այլ աշխարհի կարգն էլ չես իմանում»[3]:

Ռաֆֆուն հաջողվել է գեղարվեստական խոսքի միջոցով տալ եզդիների ավանդական կենցաղի համառոտ պատկերը, որը հակադիր ու անհասկանալի է վեպի հերոսի աշխարհընկալումներին: Դա երկու ժողովուրդների մտածելակերպի ու մոտեցումների գաղափարական հակադրություն է, ընդունված նորմերի արտահայտման փայլուն օրինակ: Ինչն անընդունելի և անհասկանալի է Ֆարհատին, բեկի համար սովորական զբաղմունք է: Հեղինակն այս հակադրությունում փայլուն կերպով է լուծել

---

[1] Նույն տեղում, էջ 496:

[2] Նույն տեղում, էջ 497:

[3] Նույն տեղում:

իր առջև դրված խնդիրը՝ գեղարվեստը ծառայեցնելով ազգային ընկալումների ու պատկերացումների արտահայտման միջոցի:

«Քրդերի մեջ օրենքի զորություն էր ստացել այն սովորությունը,- գրում է Ռաֆֆին,- երբ մի առանձին ցեղին պատկանող մարդ հափշտակում է... ուրիշ ցեղի հասարակությանը պատկանող մի մարդու սեփականությունը, վերջինս իրավունք ունի իր կորստի փոխարեն հափշտակել ավազակի ցեղին պատկանող օտար մարդու կայքից, թեև նա ամենևին խառը չէ եղել հիշյալ գողության գործի մեջ»[1]: Այս վրեժխնդրությունը տարածվում էր նաև մարդկանց վրա: Սպանվածի փոխարեն կարող էին սպանել մի ուրիշ մարդու հակառակ ցեղից, թեև նա բոլորովին անմեղ լիներ: «Դա ծագում է այն սկզբունքից, որ ցեղը քրդերի մեջ մի ամբողջ ընտանիք է»՝ կապված նյութական, բարոյական կապերով, յուրաքանչյուր անհատ մյուսի համար պատասխանատու է[2]:

Եզդիների մեջ կենցաղավարման փոխադարձ երաշխավորության այս սկզբունքն իր արմատներով աղերսվում է պատմության վաղանջական փուլերին, որը զարմանալի կերպով պահպանվել է մինչ 19-րդ դարը և որպես վերապրուկ հասել նաև մեր օրերը:

Ռաֆֆին նկարագրում է եզդիների մեջ կիրառվող ժողովրդական բժշկության մի պատառիկ: Նիզակից ստացված վերքը տեսնելով՝ «Պառավներից մեկը սկսեց լիզել վերքը և ծծելով դուրս քաշել արյունը: Դա մի զգուշություն էր, չթողնել որ մարմինը վարակվի, եթե վիրավորող զենքը թունավոր է եղել»: Ռաֆֆին դա համեմատում է Արալեզ կամ Հարալեզ դիցաբանական անունների հետ, թե ինչ ֆունկցիա էին կատարում «բժիշկ աստվածները»: Հանգում այն հետևության, որ գազանները նույնպես իրենց ստացած վերքերը լիզելով են առողջացնում[3]:

Անդրադառնալով եզդիների երգերին՝ Ռաֆֆին գրում է. «Քրդի երգը լսելիս, մարդ միշտ երևակայում է՝ իրան-քրդին, նիզակը ձեռքին, սեգ նժույգի վրա նստած, կայծակի պես սլանում է լեռների մեջ: Քուրդ աշուղի երգածները մի ամբողջ վեպ է, որը **ժողովրդական պոետը** վերցրել էր կենդանի անցքերից: Այդ երգում նկարագրվում է այն ահեղ կռիվը, որը

---

[1] Նույն տեղում, էջ 498:

[2] Նույն տեղում: Եթե ինչ որ պատճառով կոտորվում են եզդու ոչխարները, ցեղակիցները օգնելով՝ լրացնում են նրա հոտի նախկին քանակությունը:

[3] Տե՛ս նույն տեղում, 498-499:

տեղի է ունեցել տարբեր քրդական ցեղերի մեջ: Ռաֆֆին աշուղին համեմատում է մեր գողթան երգիչների հետ, որոնց ձայնը լռեց, երբ «հայերի մեջ քաջազնական հոգին հանգավ»[1]: Ռաֆֆին բերում է քրդական երգի մի օրինակ.

Այն քաջ մարդու շապիկն է դա,
Որ իմ ձեռքով կարեցի.
Արյունոտ է, կարմիր ներկած,
Արտասուքով լվացի:

Դա շապիկն է այն քաջ մարդու,
Որ քեզի հայր կոչվում է,
«Վրե՛ժ, վրե՛ժ չար ոսոխից»
Գերազմանից կանչում է:

Դե՜ մեծացիր, իմ նազելի,
Չարի արյունը խմե՛,
Քո մոր սրտին մխիթարանք,
Ուրախություն պարգևե՛[2] :

Երգը երգելիս,- գրում է Ռաֆֆին,- մանկահասակ կինը իր փոքրիկ երեխային նստեցրել էր մոխիրների կույտի վրա, երեխայի պարանոցին գցել արյան մեջ շաղախված մի շապիկ: Նա գետնից վերցնելով մոխիրը լցնում էր իր գլխին, լաց լինում և դառը կերպով երգում: Նա սովորեցնում էր իր զավակին վրեժխնդիր լինել հոր սպանության համար, որ ապրելը «առանց սրի ու արյունի կյանք չէ»[3]: Ռաֆֆին դա համեմատում է հայ իրականության հետ՝ գրելով. ի՞նչ է սովորեցնում իր զավակին հայուհին: Սովորեցնում է «խոնարհ և համեստ լինել»: Քուրդ կինը իր զավակներից գազաններ է պատրաստում, իսկ հայ կինը՝ գառներ: Գալիս է այն հետևության, թե «անձնապաշտությունը սուրբ է մարդու համար նույնքան, որքան արդար վրեժխնդրությունը»[4]:

Քրդուհին, լինելով իշխանի կին կամ հովվի, իր գործերը սեփական ձեռքերով է անում, անգործ է միայն տղամարդը: Նրա գլխավոր զբաղ-

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 499-500:
[2] Նույն տեղում, էջ 501:
[3] Նույն տեղում, էջ 501-502:
[4] Նույն տեղում, էջ 502:

մունքը ավազակությունն է, որ շահ է բերում ընտանիքին, այս գործում քուրդը ծույլ չէ[1]:

Քուրդը ձիու վրա ճարպիկ է, արագաշարժ, խորամանկ, կատարում է ամեն տեսակի զործողություն, սանձից չի օգտվում, ծնկների միջոցով ուղղություն է տալիս ձիուն և ազատ ձեռքերով հարվածում հակառակորդին: «Ձին և քուրդը գործում են որպես մի ամբողջ մարմին[2]»: Քուրդը երբեք իր նժույգը չի տալիս ուրիշին, մինչև իսկ եղբորը: Պատահական չէ քրդերի մեջ տարածված առակը. «Երկու բան չի կարելի ուրիշին տալ..., մեկը՝ կինը, մյուսը՝ ձին»[3]:

Թեև Ռաֆֆին եզդիներին նվիրված հատվածը վերնագրել է «Եզիդներ», սակայն շարադրանքում ավելի շատ օգտագործում է քուրդ բառը, քան եզդի: Թվում է, թե նա հստակորեն չի տարբերակում քրդերին ու եզդիներին: Ուշագրավ է, որ Խ. Աբովյանն իր աշխատանքում[4] չնայած քրդերին ու եզդիներին դիտարկել է առանձին-առանձին, սակայն նկատելով կենցաղամշակութային շատ ընդհանրություններ, քրդերի շարադրանքից հետո, հիմնականում շեշտադրել է եզդիների կրոնական հավատալիքները: Մինչև իսկ մեր օրերում միասնական կարծիք չկա այդ երկու հանրությունների բնութագրման հարցում: Երբեմն եզդիներին համարում են քրդական ցեղերից մեկը, ուրիշ դեպքում՝ «քրդերը» ընկալվում են լայն առումով՝ ներառելով նաև եզդիներին, ինչպես նաև այն եզդիներին, որոնք իրենց քուրդ են համարում: Այլ կարծիքով՝ «Եզդիները իրենց լեզվով, գրերով, կրոնով, սովորույթներով և ազգային շատ այլ առանձնահատկություններով ինքնատիպ, առանձին ժողովուրդ են»[5]: Այնպես որ Ռաֆֆու մոտեցումները 19-րդ դարի կտրվածքով «քուրդ» և «եզիդ» հանրությունների սահմանազատման հարցում լիովին արդարացված է:

Պարսիկներ: Վիպական հատվածում[6] Ռաֆֆին թվարկում է Ատրպատականի այն գավառները, որտեղ հայեր են ապրում. Սալմաստ, Խոյ, Մակու, Ուրմիա, Մարաղա, Ղարադաղ, Թավրիզ քաղաք և այլն, հայերի

---

[1] Նույն տեղում, էջ 503-504:

[2] Նույն տեղում, էջ 504:

[3] Նույն տեղում, էջ 505:

[4] **Խ. Աբովյան**, Քրդեր և եզդիներ, ԵԼԺ, հ. 8, Երևան, 1958:

[5] Մանրամասները տե՛ս Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնություններն այսօր, գ. 1, Երևան, 2000, էջ 25:

[6] **Ռաֆֆի**, Ի՞նչ է պարսիկը, «Կայծեր», հ. 4, էջ 368:

հետ՝ հրեաներ, ասորիներ, քրդեր, բոշաներ, սակայն բնակչության մեծ մասը կազմում են ղզլբաշ թուրքերը: Հասկանալի է, որ տիրողները պարսիկներն են, որոնց մեջ առանձնանում են լաքերը, ավշարները, թաթերը, Ղարադաղի էլաթները և ուրիշներ: Նրանք խոսում են թուրքերեն, որը շատ է տարբերվում օսմանյան տաճկերենից, կրոնով մահմեդական են և պատկանում են **շիա** աղանդին: Մահմեդականների մեջ ոչ մահմեդականների նկատմամբ մոլեռանդությունը հասնում է խելագարության: Ովքեր չէին հետևում իսլամին, համարվում էին պիղծ: Մահմեդականը չէր օգտագործում ոչ մահմեդականի կողմից պատրաստած սնունդը, չէր հագնում նրանց գործած հագուստը, չէր օգտագործում այլադավանների ձեռքով շինված կահկարասին: Նա պիղծ էր համարում նրանց անձը, անձրև օրերին այլադավանները թաց հագուստով չէին կարող դիպչել մահմեդականին, հակառակ դեպքում պատժվում էին[1]:

Քաղաքներում,- ըստ Ռաֆֆու,- հայերը բնակեցված էին առանձին արվարձաններում, որպես կանոն, հայերին չէին թույլատրում ապրել մահմեդականների հետ: Հայերի համար էլ հարմար չէր խառը բնակվելը, որովհետև ամեն քայլափոխի նրանցից վտանգ էր սպասվում: Թերևս բացառություն է կազմում Թեհրանը, որտեղ որոշակի հանդուրժողականություն կար քրիստոնյաների նկատմամբ[2]:

Փողոցում, հասարակական վայրերում հայերը զրկված էին «ամեն մի թաց բանի» ձեռք տալու իրավունքից, ինչը վաճառում է մահմեդականը,- գրում է Ռաֆֆին: Երբ Ռաֆֆու սպասավոր Մեսրոպը անզգուշորեն մատով դիպչում է ոչխարի մսին, մսավաճառը գտնում է, որ նա պղծեց միսը, ուստի պետք է գնի ամբողջ ոչխարը: Միայն կրկնակի վճարելով է սպասավորն ազատվում[3]: Շարիաթն ամենուրեք սահմանափակում էր ոչ մահմեդականների իրավունքները: Դատարաններում դատական վեճերը վճռում էին մոլլաները, քրիստոնյան իրավունք չուներ մահմեդականի դեմ վկայություն տալու: Միայն մի դեպքում նա կարող էր վկայել, եթե դա մահմեդականի օգտին էր: Աղջիկ, տղա առևանգելը, դավանափոխ անելը սովորական երևույթ էր: Ընտանիքի որևէ անդամ ընդունելով մահմե-

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 369:

[2] Տե՛ս **Ռաֆֆի**, Հոդվածներ, ԵԺ, հ. 9, Երևան, 1964, էջ 136-137:

[3] Տե՛ս **Ա. Պետրոսյան**, Ռաֆֆու պարսկական ուղևորությունները որպես պարսկահայերի ազգագրական ուսումնասիրության սկզբնաղբյուր, ՊԲՀ, 2007, թիվ 3, էջ 108:

դականություն՝ կարող էր տիրանալ գերդաստանին պատկանող կայքին: Նա մեծ արտոնություն ուներ նաև **մյուս աշխարհում**, նրա որդիները մինչև յոթ սերունդ ազատ էին գործած հանցանքի պատասխանատվությունից[1]:

Մահմեդական պաշտոնյաները քրիստոնյաների կրոնական արարողություններն էին ծաղրանքի առարկա դարձնում: Չեմ մոռանում,- գրում է Ռաֆֆին,- երբ «խանը հրամայեց հայ քահանային սաղավարտը դնել իր շան գլխին, շուրջառը գցել նրա վրա, և ...իր բուրվառով խնկարկել շանը»: Սակայն հոգևորականը չկատարեց հրամանը, նրան շան հետ միասին գցեցին պարկի մեջ, բերանը կապեցին և բազմության առջև սկսեցին փայտով ծեծել, որը զվարճություն էր պատճառում անգութ բարբարոսներին[2]:

Մահմեդականները չունեին զորանոցներ, պատերազմների ժամանակ վանքերն ու եկեղեցիները դառնում էին զինվորների կացարաններ, սուրբ տաճարները վերածվում ձիու ախոռների, շատ դեպքերում՝ ոչխարների ձմեռանոցների: Ո՞վ կարող էր հակառակվել, «նրա լեզուն իսկույն կկտրեին»[3]:

Հայերին արգելում էին նոր եկեղեցիներ կառուցել և տները նորոգել: Գաղտնի կերպով, գիշերով, եթե հաջողվում էր ինչ-որ բան անել, բացահայտվելու դեպքում սարսափելի պատիժ էր սպասվում: «Զանգակի ձայն ամենևին չէինք լսում, զանգահարությունը արգելված էր»: Մահմեդականությունը ոչ միայն պղծում էր քրիստոնիայի սրբությունները, այլև արատավորում նրանց ընտանեկան պատիվը: Ես գիտեմ հարյուրավոր, հազարավոր օրինակներ, թե ինչպես հայ աղջիկն ու կինը զոհ էին գնում մահմեդականի անբարոյական բարքերին: Երբ խանի սպասավորները եկան մի աղջիկ տանելու, հայրն աղաչում էր, որ չխլեն աղջկան: Երբ հոր արտասուքը չկարողացավ շարժել նրանց գութը, նա դանակը խրեց իր դստեր կրծքի մեջ, ասելով «հիմա տարեք այս դիակը»: Նույն օրը նրա տունը հրդեհեցին, իսկ ինքը մեռավ բանտում[4]:

---

[1] Տե՛ս **Ռաֆֆի**, Ի՞նչ է պարսիկը, էջ 371:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում, էջ 371-372:

[4] Նույն տեղում, էջ 372:

Մի ուրիշ դեպքում խանի որդին դաշտում հանդիպելով հայ աղջկան՝ ասում է. ինչ լավ աչքեր ունես: Երբ հաջորդ օրը եկան աղջկան տանելու, գտան երկու աչքով կույր: Աղջիկն ինքն էր կուրացրել իրեն: Նման դեպքերը եզակի էին: Առևանգած աղջկան անարգելուց հետո խանը նրան ամուսնացնում էր իր սպասավորներից մեկի հետ, իսկ իր հնացած հագուստը պարգևում այս կամ այն ծառային որպես **խալաթ**[1]:

Մի անգամ մահմեդականություն ընդունած անձը շարիաթի օրենքով այլևս չէր կարող վերադառնալ իր նախկին կրոնին: Եթե տղամարդ էր ետ կանգնողը, ամեն մահմեդական կարող էր սպանել նրան, իսկ եթե կին էր, բանտարկում էին, այնքան տանջում մինչև խոստովաներ, թե կրկին մահմեդականություն է ընդունում: Հայերից բացի հալածական էին նաև ասորիները, հրեաները և գնչուները[2]:

Ատրպատականի մզկիթներին կից կային վարժարաններ, որտեղ մոլաները բնակչությանը քարոզում էին այլադավանների նկատմամբ անհանդուրժող լինել: Մոլլաներից բացի կային նաև **սևիդներ**, որոնք իրենց համարում էին մարգարեի որդիներ, ապրում էին մահմեդականների կողմից վճարվող տասանորդներով: Նրանց դատապարտել հնարավոր չէր. դրանից դժգոհ էին ոչ միայն քրիստոնյաները, այլև՝ մահմեդականները: «Այժմ էլ սարսափով եմ հիշում նրանց չարագործությունները... ավերմունքը, որքան արյան, որքան ընտանիքների աղքատության պատճառ էին դառնում նրանք»- գրում Ռաֆֆին[3]:

Ատրպատականը բաժանված էր խաների, բեկերի միջև: Աղան համարվում էր կալվածատեր, նա իրավունք ուներ գրավ դնել իր հողը, վաճառել և շահույթ ստանալ: Գյուղերը բաժանված էին աղաների միջև, հաճախակի կռիվները, գյուղեր հրդեհելը, գերիներ վերցնելը և հետագայում այլ ապրանքների հետ փոխանակելը սովորական էին: Կռիվն ու թշնամանքը ֆեոդալական իշխանությունների միջև անպակաս էին: Հարկերն ու տուրքերը միատեսակ չէին, քրիստոնյաները հողի և անասունների համար տարբեր հարկեր էին վճարում: Հարկերից ազատված էին դաշտում աշխատող անասունները՝ եզը, արու գոմեշը, որձ ձին, բոլոր էգերը:

---

[1] Նույն տեղում, էջ 372-373:

[2] Նույն տեղում, էջ 373:

[3] Նույն տեղում:

Հարկերից բացի ծանր էր ամեն տեսակի արվեստներից գանձվող մաքսերը, ինչպես նաև արքունի տուրքերը[1]:

Ըստ Ռաֆֆու՝ Ատրպատականի (Պարսկաստան), Տարոնի ու Վասպուրականի բնակիչների կյանքն ուներ հակադիր պատկեր: Պարսկական մասում տիրապետում էին պարսիկները, ղզլբաշ թուրքերը, իսկ տաճկական մասում՝ քրդերը: Պարսիկը որպես կրոնական ազգ, մոլեռանդ էր, ձգտում էր մյուս ժողովուրդներին «մտցնել մահմեդական մըզկիթ», իսկ քուրդը դեռ վարակված չէր այդ ախտով: «Մեկը խորամանկ հարստահարող է, մյուսը՝ մեծասիրտ ավազակ, երկու դեպքում էլ տանջվում է…գյուղացին»[2]:

Այսպիսով, քրդերի, եզդիների ու պարսիկների վերաբերյալ Ռաֆֆու նկարագրությունները հեղինակի անձնական դիտարկումների ու պրպտումների արժանահավատ արդյունք էին՝ վերցված ռեալ իրականությունից: Ռաֆֆու վերոհիշյալ հաղորդումները կարող են ծառայել որպես սկզբնաղբյուր այդ էթնիկ հանրությունների ավանդական կենցաղն ու մշակույթը բնութագրելիս:

ՔՐԴԵՐԻ, ԵԶԴԻՆԵՐԻ ՈՒ ՊԱՐՍԻԿՆԵՐԻ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՌԱՖՖՈՒ «ԿԱՅԾԵՐ ՎԵՊՈՒՄ»

Անուշավան Պետրոսյան

Բանալի բառեր *- Արյան վրեժ, հյուրասիրության չիբուխ, թլպատում, շեյխի գլուխը վկա, շարժական ապարանք, շարիաթ, խալաթ*

Ռաֆֆին այս էթնիկ հանրություններին անդրադարձել է առանձին-առանձին: Գեղարվեստական արձակի միջոցով տվել է **քրդերի** քոչվոր վրանների, հյուրասիրության, արյան վրեժի, ամուսնության, ուտեստի, տարազի, երգերի նկարագիրը, անդրադարձել է **եզդիների** կրոնական հավատալիքներին, ընտանիքին, ժողովրդական բժշկությանը, աշուղական արվեստին, քրդուհու ու հայուհու համեմատական նկարագրին: **Պարսիկներին** բնութագրելիս Ռաֆֆին կանգ է առել քրիստոնյաներին հալածելու, սրբավայրերը պղծելու, կրոնական մոլեռանդության, դավանափոխ անելու, գանձվող հարկերի ու տուրքերի վրա:

Ռաֆֆու նկարագրությունները կարող են օգտագործվել այդ ժողովուրդների կենցաղն ու մշակույթը բնութագրելիս:

---

[1] Նույն տեղում, էջ 374-375:

[2] Տե՛ս նույն տեղում:

КРАТКАЯ ЭТНОГРАФИЧЕСКАЯ ХАРАКТЕРИСТИКА КУРДОВ, ЕЗИДОВ И ПЕРСОВ В РОМАНЕ РАФФИ «КАЙЦЕР»

Анушаван Петросян

Ключевые слава *- Качевых шатры, кровная месть, гостепремство, народная медицина, пища одежда, брак, свадьба*

Раффи к этим этническим общностям обратился по отдельности. Средствами художественной прозы было дано описание кочевых шатров, гостеприимности, кровной мести, женитьбы, пищи, национального костюма, песен курдов. Обратился к религиозным поверьям, семье, народной медицине, ашугскому искусству езидов, сравнительной характеристике курдянки и армянки: При охарактеризовании персов Раффи остановился на гонении армян, осквернении святынь, религиозном фанатизме, принуждении к вероотступничеству, взымаемых налогах и пошлинах.

Описания Раффи могут быть использованы при охарактеризовании традиционного быта и культуры этих народов.

KURDS YEZIDI PERSIANS ETHNIC BRIEF DESCRIPTION IN RAFFI'S "KAYTSER" NOVEL

Anushavan Petrosyan

Keywords: *nomadic tents, blood revange, hospitality, folk, medicine, dishes, clethes, marriage, wedding*

Raffi has turned to these nations separately. Through prose fiction has given description of kurds nomad tent hospitality blood revenge, marriage, food, vogue, and songs. Has turned to yezidi religious beliefs, family, traditional medicine, folk art, kurd and Armenian girl comparative description. When describing Persians, Raffi has described on Armenian’s massacre, defiling shrines, religious fanaticism, proselytism, taxes and fees.

Raffi's descriptions can be used to describe the lifestyle and culture of those nations.